

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերի դիմաց է հնչյունափոխության վերաբերյալ նշումը ճիշտ տրված:** (1 միավոր)

- 1) մտավախություն – **ի>թ**, աղվամազ – **ու>զ**, կենսապատում – **յա>ե**, սանրվել – **ը-ն սղվել** է
- 2) ալրադաց – **յու-ն սղվել** է, համալրվել – **ի>թ**, քննադատ – չունի, նախնական – **ի-ն սղվել** է
- 3) պրօճել – **ու>թ**, բուսական – **ույ>ու**, պատանյակ – **ի-ն սղվել** է, օրինապահ – **ե>ի**
- 4) պատրանքային – **ի-ն սղվել** է, ցրվածք – **ի>թ**, կլանում – **ու>թ**, սուրալ – **ույ>ու**

2 **Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են միմյանց հոմանիշ:** (1 միավոր)

- 1) բանդագուշանք, զառանցանք, ցնորք, բարբաջանք
- 2) մոլեգին, խելահեղ, խոլական, վայրագ
- 3) հարևանցի, մակերեսային, թռուցիկ, անրովանդակ
- 4) ունայն, սննութի, անհիմն, ապարդյուն

3 **Ո՞ր տարրերակում կան մեկից ավելի անկանոն բայեր, որոնք տվյալ ձևում անկանոնություն են դրսելու:** (1 միավոր)

- 1) Մոտ հարյուր տղամարդ, հրացաններն առած, եկան իրենց հրամանատարի մոտ՝ հայտնելու աղետալի լուրը:
- 2) Ավետիքը վեր կացավ տեղից և հրացանը դնելով քարի մոտ՝ արագ մոտեցավ կամավորներին:
- 3) Համայնքի քարտուղարն անձնատուր եղավ պահի թելադրանքին և կշտամբանքով լի հայացքով դարձավ հավաքվածների կողմը:
- 4) Երրորդ գիշերն այդ զգացումը տեղի տվեց բանտարկյալին տեսնելու, հետո խոսելու տարօրինակ ցանկությանը:

4 **Ո՞ր նախադասության մեջ փակագծերում նշված շարահյուսական պաշտոնը կատարող անդամ չկա:** (1 միավոր)

- 1) Չնայած բազում խոչընդոտներին՝ այդ ականավոր մարդու ազգանվեր ծրագրերն օրեցօր ավելի պարզորոշ էին դառնում: (*զիջման պարագա*)
- 2) Հենց այդպիսի մարդասյաց մտածողի դերի մասին էր երազում Բալզակը, որին, սակայն, բնավ խորթ չէր ուրախ տրամադրությունը: (*հանգման խնդիր*)
- 3) Մայրը դեռևս այդ տան տերն էր, և առայժմ նրան աղքատ չէր կարելի համարել, թեանտ կարիքի մեջ էր ապրում: (*տեղի պարագա*)
- 4) Տարիները նրան ավելի գեղեցիկ չէին դարձրել, բայց և չէին խլել նրանից իր անբացատրելի հմայքը: (*բաղադրյալ ստորոգյալ*)

5 Ո՞ր տարրերակում են ճիշտ նշված բոլոր այն միավորների համարները, որոնք տրված տեքստում առկա են: (1 միավոր)

Ավագների խորհրդի կարգադրության համաձայն՝ կամավորները պիտի հավաքվեին եկեղեցու գավիրում: Գալթակայանի բոլոր բնակիչները, նույնիսկ փոքրիկ Խոկուհին, եկեղեցին: Թշում էր՝ ամբողջ ժողովուրդը տոգորված է կյանքը զոհաբերելու պատրաստակամությամբ: Սահակը դեռ ճամապարհի քառորդ մասն էր անցել, երբ հանդիպել էր Խոկուհուն, որ շարունակ լինում էր նրա կողքին՝ մանկական երախտագիտությունից դրդված:

1. կապ, երկդրություն, 2. ժամանակի մակրայ, 3. թվական, 4. **աճ** արտաքին հոլովման ենթարկվող գոյական, 5. սոսկածանցավոր անկանոն բայ, 6. ցուցական դերանուն, 7. ստորադասական շաղկապ, 8. վերաբերական, 9. կրավորական ածանցով չեզոք բայ

- 1) 1, 2, 3, 5, 8, 9
- 2) 2, 4, 5, 6, 7, 9
- 3) 1, 3, 4, 7, 9
- 4) 2, 3, 4, 6, 7, 8

6 Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -**ԱՆՇ** վերջավորությամբ: (1 միավոր)

- 1) քարհատ, սպունգ, ուղեցույց, տեսակետ
- 2) բազակիր, ատամնաբույժ, տոնածառ, մաքսանենգ
- 3) պատշար, խմբագիր, զորացույց, ջրաչափ
- 4) երկնաքեր, սահմանապահ, օրիներգ, միջանցք

7 Ո՞ր դարձվածքներն են սխալ բացատրված: (1 միավոր)

1. **ԵՐԵՍՔ ՎԻԱԿԻՈՒԿ** – թուլակամ, հեշտությամբ գիշող
2. **ԱՐԻ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԱՆ ԷԼ ԿՄՐԵԼ** – բոլորին հակադրվել
3. **ԼԱՊՈՒՅԱ ԱՐՅՈՒՆ ՈՒՅԵՆԱԼ** – ազնվական ծագում ունենալ
4. **ԼԱՍՈՒ ԴԱՄՆԱԼ** – հնագանդվել, խեղճանալ
5. **ԼԱՐԿՈՒՄԻ ՎԵՆ ՎՐԱ ՄԱԼ** – շտապ օգնության հասնել
6. **ԼԱՐՄԻՐ ԼՈՒՅ ՎԱՐԵԼ ՄԵԼԻ ԱՌՋՆ** – խոչընդոտել, արգելել
7. **ԼՐԱՆ ԿՈՎ** – ուրիշի կամքին հարմարվող
8. **ԴՐԱՆՑ ԼԱՎԵԼՈ ՀՌԱՆ** – ստոր պարտականություն կատարող անձ
9. **ՃԱՅԱ ԴՊՈՒՏ ՎԱԼ** – լուր տարածվել, իմացվել

8 **Տրված բառերից որո՞նք թերականական իմաստ չեն կարող արտահայտել:** (1 միավոր)

1. երեսից, 2. նախքան, 3. հեռու, 4. նաև, 5. միմյանց, 6. թերևս, 7. այսինչ, 8. որպիսի, 9. գծով

9 **Ո՞ր բայերն են սոսկածանցավոր:** (1 միավոր)

1. խթանի, 2. դիպչելով, 3. կլանչել, 4. առնելուց, 5. շառաչել է, 6. կմեկնի, 7. երկնչելու, 8. կպած, 9. ուզում էր

10 **Ո՞ր բառերն են կազմությամբ բարդ:** (1 միավոր)

1. այլադավան, 2. տատասկապատ, 3. սահմանամերձ, 4. պատկերահան,
5. երկհատոր, 6. հավերժաբաղձ, 7. ուղղանկյուն, 8. հրահանգ, 9. հովեկ

11 **Ո՞ր նախադասություններում գրության սխալ ունեցող բառ կա:** (1 միավոր)

1. Տասնութերորդ դարի սկզբներին արևմտահայության շրջանում կարոյիկ և առաջելական համայնքների միջև լուրջ երկպառակտություն է սկսվում: 2. Մխիթար Սեբաստացին, որը կաթողիկ էր, որոշում է հեռանալ Կ. Պոլսից և հիմնել Մխիթարյան Միաբանությունը: 3. Նրա աշակերտները ժամանում են Հռոմ, ջերմ ընդունելության արժանանում Կղեմենտ Տասնմեկերորդի կողմից: 4. Վատիկանը Մխիթարին շնորհում է աքքահոր կոչում: 5. Հետազայում նա թույլատվություն է ստանում գործունեություն ծավալելու Վենետիկի Սուրբ Ղազար կղզում: 6. Մխիթարյաններն իրենց գոյության ընթացքում մշտապես կատարել են բանասիրական, լեզվաբանական, պատմագիտական, բարբառագիտական, բառարանագրական լուրջ աշխատանքներ: 7. Նրանք նաև բազմաթիվ թարգմանություններ են կատարել հելեն, լատին, ֆրանսիացի և եվրոպացի հեղինակներից: 8. Ներկայումս վանքի թանգարանում ցուցադրվում են Մխիթարյաններին վերաբերող բազմաթիվ արժեքավոր նշանականներ: 9. Ժամանակի ընթացքում շատ բան է ճշտվում և նորովի արժեվորվում Մխիթարյանների գործունեության վերաբերյալ:

Նշել տվյալ բնորոշմանը համապատասխանող նախադասությունների համարները:
(9 միավոր)

1. Դույլը այնտեղ չէր, որ նիրհել էր եղնիկների ընտանիքը. այդ մի գործի չափ տեղին չի կարելի եղնիկների նստատեղ ասել, որովհետև հրացանավորված կզան: 2. Թուքը պետք է կուլ տալ, և այս տեղը, որ քիչ առաջ հանգիստ պառկել ու նիրհել է եղնիկների ընտանիքը, պահել քո մեջ հենց այսպես՝ առանց անունի. փոքրիկ, հարք մի տեղ, երեք կարմիր եղնիկ, դեղնականաչ մոռի մի քուփ և լուռ անտառ: 3. Մոռերը հեշտությամբ են քաղվում. տղան քաղելու ճիշտ օրն է գտել մոռուտը, և ոչ մի մոռ չի թափվի, որովհետև այդ մոռուտի քոլոր թփերը միայն տղայինն են: 4. Դույլն արդեն լիքն է, բայց չի կարելի այս մոռուտի տեղն ասել, որովհետև երեխաները խումբ տված կզան. կզան, կքաղեն, կտրորեն, կկշտանան կամ չեն կշտանա, կոխ կրոնեն, կգլորվեն և գյուղ կիջնեն՝ դույլերին դիոլ խփելով, և քանի որ մոռ չեն տանի, եղնիկների մասին բարի լուր կտանեն: 5. Մեծերը նրանց չեն լսի, սուսուփուս կմտնեն անտառ, դրանից հետո եղնիկներն այլևս չեն լինի:

6. Մոռով լի կռատուկի թերը փորին պահած՝ տղան չտեսավ դույլը, չգտավ նաև մոռի դեղնականաչ քուփը և կարծեց՝ սխալվել է: 7. Տղան, ո՛չ, չէր սխալվել. քիչ հեռու եղինջն էր դեղնականաչ. ուրեմն շողը սահել էր մոռի թփից, ընկել էր եղինջին, դեղնացրել, դարձրել դեղնականաչ: 8. Տղան տեսավ, որ իր մեջ զգվանք է ուշչում նրա դեմ, ով այստեղ էր և փոխել էր դույլի տեղը, մտովի տեսնում էր նենգամիտի նրա դեմքը, զգում էր նրա մեջ արթնացող գողին, որ կարող էր մտերիմ կատակը լրջացնել: 9. Մոռի վերին շերտը ճմովել էր, հյուրը մատների արանքով ծորում էր. տղան այդ մոռերը փոեց կռատուկի թերի երեսով մեկ, որպեսզի հանդիպողները, եթե կանգնեցնեին, մի երկու հատիկ ուտեին ճմովածից:

- 12.1 նախադասություն(ներ), որի (որոնց) բոլոր ստորոգյալները միևնույն բայական եղանակով են դրված
- 12.2 հարադրավոր բայ ունեցող նախադասություն(ներ)
- 12.3 պատճառական բայ ունեցող նախադասություն(ներ)
- 12.4 վերաբերական ունեցող նախադասություն(ներ)
- 12.5 կապ ունեցող նախադասություն(ներ)
- 12.6 **ա** ներքին հոլովման ենթարկվող գոյական ունեցող նախադասություն(ներ)
- 12.7 մակրայ ունեցող նախադասություն(ներ)
- 12.8 փոխանվանաբար գործածված ածական ունեցող նախադասություն(ներ)
- 12.9 մեկից ավելի անկախ դերբայ ունեցող նախադասություն(ներ)

**13 Նշել տվյալ բնորդմանը համապատասխանող նախադասությունների համարները:
(9 միավոր)**

1. Գյուղը երեք քաղ ունի՝ Հյումբարի ձոր, Սիջին մահլա և Գյունեյ քաղ. Երեք քաղն էլ ձորերի մեջ են, տները գետնափոր են, փողոցները՝ քարայծի ճանապարի: 2. Հնուց բերդ է եղել Հյումբարի ձորում՝ ապահով քաքսոցներով, որոնց հետքերը նեղլիկ անցքերի տեսքով այժմ էլ մնում են սեպաձև ժայռերի լանջերին: 3. Սրածայր ժայռեր են դրանք՝ կողք կողքի շարված, փոքր ու մեծ. մեկը ծուռ է, կողքի թեքված փուլ եկող դեզի նման, մյուսը՝ քարակ քարդու նման ուղղաձիգ: 4. Զյունն ու անձրևը քերծել են ժայռերի կողերը, լվացել և դարձրել ողորկ, հազար տեսակ ձևեր տվել, կերտել ու քանդակել տարբեր պատկերներ. անաման եղանակին դրանց նայելիս թվում է, թե մեկը հսկա քոչուն է՝ քառած քարի գլխին, մյուսը՝ գորշավուն գորտ, երրորդը՝ կնոջ կիսանդրի: 5. Փոքր-ինչ ավելի ներքն՝ տաճ ժայռերի տակ, Հյումբարն է ծվարել, բլրակի վրա քառել է Սիջին մահլան, իսկ արև-կող երեսին Գյունեյ քաղն է տարածվել: 6. Աղօամուղջին ինչքա՞ն մոայլ են թվում վերի ժայռերը. կարծես առասպելական իրեշներ լինեն: 7. Հին քարանձավներից, որտեղ առաջ մարդն է ապրել, մութ գիշերով ելնում է գայլը, դունչը գյուղի կողմը դարձնում ու ահասարութ ոռնում: 8. Անհիշելի ժամանակներից մարդիկ ապրում են Հյումբարի ձորում. նույն քարանձավում այժմ էլ ապրում է մի սերունդ, որի նախապապերն այդ քա-րանձավում իրենց մերկությունը ծածկում էին զազանի նորթով, և որոնց բրածո քազուկ-ների հաստ ուկորները այժմ երանության ու նախանձի ժայռի են հարուցում մանրացած սերնդի աշքերում: 9. Հին անտառից ոչինչ չի մնացել՝ ավանդությունից քացի. այնտեղ, ուր այժմ մի զույգ լրար եղ ծանր կամն է քաշում, կամի վրա նստած ծերունին շոգ օրերին միտն է բերում պապի պատմածը կալատեղի և այն օրերի մասին, երբ Գյունեյի լանջե-րին խիտ անտառ կար, ձորում՝ շամբուտներ, որտեղ կայծքարե հրացանով վարագ էին որսում մելիքները:

- 13.1 ուղիղ խնդիր **չունեցող** նախադասություն(ներ)
- 13.2 քաղադրյալ ստորոգյալ ունեցող նախադասություն(ներ)
- 13.3 գոյականով արտահայտված ժամանակի պարագա ունեցող նախադասություն(ներ)
- 13.4 շափի պարագա ունեցող նախադասություն(ներ)
- 13.5 քացահայտիչ ունեցող նախադասություն(ներ)
- 13.6 քազմակի անդամներ ունեցող նախադասություն(ներ)
- 13.7 միջոցի խնդիր ունեցող նախադասություն(ներ)
- 13.8 դերբայական դարձված ունեցող նախադասություն(ներ)
- 13.9 դերանունով արտահայտված որոշիչ ունեցող նախադասություն(ներ)

14

**Նախադասություններից 3-ում գործածված բայերի սեռերի վերաբերյալ
պնդումներում սխալ կա: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, թերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սկին են անում բարձր բուրգերը: (*Բոլոր բայերը չեզոք սեռի են:*)
2. Հեռվից ավերակներ չեն երևում, և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, զոյ են ապարանքի երկարեղ դրները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու բարափր բարձրացողի հետևից: (*Առկա են չեզոք և ներգործական սեռի բայեր:*)
3. Երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվենները, պարսպի վրա երևում են մացառներ, աշտարակի խոնարհված գլուխը և դարերի ընթացքում կիսախարիսուլ դարձած ու կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները: (*Առկա են բոլոր 3 սեռերի բայեր:*)
4. Ակնոցի արանքից նրա ուսայալ աչքերը տեսնում էին զրահավորներին, մազաղաթյա մատենազրին՝ եղեգնյա գրչով նրանց գովքը հորինելիս, և նա լսում էր հնօրյա ձիերի դոփյունը: (*Բոլոր բայերը ներգործական սեռի բայեր:*)
5. Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվելով գլուխը հենում է քարին: (*Առկա են միայն չեզոք և ներգործական սեռի բայեր:*)
6. Նա բարձրացավ պարսպի վրա, գլուխը դուրս հանեց բուրգի դիտարանից և բարձր կանչեց, երբ բուրգի անկյունում՝ քարի վրա, տեսավ փորագրված խոսքեր: (*Առկա են բայեր՝ բոլոր 3 սեռերից:*)
7. Երբ նրանք հասան վրաններին, շները հարձակվեցին ձիավորների վրա. շների ձայնին մի քանի հոգի դուրս եկան վրաններից, նայեցին նրանց կողմը: (*Բոլոր բայերը չեզոք սեռի են:*)
8. Երրորդ ձիավորը, որ ձիերի սանձերն արձակել ու պարսպի մոտ նստած՝ ծխում էր, հնագետի կանչից վեր թռավ. նրան թվաց, թե օքը խայթեց ակնոցավոր մարդուն: (*Առկա են չեզոք և ներգործական սեռի բայեր:*)
9. Երբ պահակին հարցրեց, թե ովքեր են եկվորները, ինչ են փնտրում թերդի ավերակներում, պահակը պատասխանեց, որ գրքերում գրված է, թե Կաքավաբերդի գլխին՝ կարասի մեջ, թաղված են ուկե զանձեր: (*Առկա են միայն ներգործական և կրավորական սեռի բայեր:*)

15

Բառերից 3-ի բացատրությունը սխալ է: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. **դագանակ** – հաստ գավազան, մահակ
2. **յամբ** – ձիու վզին կապվող օղակ
3. **յորտվաճառ** – իր կարողացածի համեմատ
4. **եղերեղ** – չորս կողմից շրջափակել
5. **զուռ** – քարեն կամ փայտեն փոքր ավազան
6. **կափոյր** – պղնձեն մեծ կաթսա
7. **մեսիկ** – միակ երեխա, մինուճար
8. **հեշտագիճ** – խիստ ախորժելի, հաճելի
9. **փայլակ** – կայծակի արձակած լույսը

16

Շարքերից 3-ում տրված ածանցը կարող է բոլոր բառերի արմատներին (արմատներից մեկին) միանալ և բառ կազմել՝ առանց երկրորդ ածանցի: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. **-ան** – կծվահամ, սյունաշար, կախազարդ
2. **-ին** – հեշտագին, դյուրահավատ, վերադարձ
3. **-ք** – կետադրություն, կրծուկը, կրագույն
4. **-ուրդ** – պարապմունք, խառնարան, արտահագուստ
5. **-որդ** – մրցավար, բաժանմունք, լողազգեստ
6. **-ուկ** – կապտականաչ, բամբակաշատ, թզաչափ
7. **-իկ** – տարկետում, մանրադրամ, հեզաշշուկ
8. **-ոս** – մազարափ, խավարտ, բրդատու
9. **-ում** – ուսանող, ինքնաշարժ, ուխտադրուժ

17

Նախադասություններից 3-ի ստորադաս բաղադրիչների քննութերը ճիշտ են տրված: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Ո՞ւր է մեր պոչը ծաղիկ երինջը, մորքեցի՞ն, թե՞ բառաչում է ուրիշի գոմում.
մտածում էինք այնքան, մինչև հոգնում էինք, քնում և երազում տեսնում երինջին:
(չափի պարագա)
2. Իշխանուիին երբեք չեր հագենում գովասանքներից, որ ստանում էր արքունիքին
մոտ կանգնած բարձրաստիճան անձանցից: *(անջատման խնդիր)*
3. Հանգչող արևի ճառագայթներից կուրացած հայերը, հրացանները վայր դրած,
սպասում էին, թե երբ կզա Կիլիկյանի հրամանը: *(հանգման խնդիր)*
4. Նա, իրոք, առիթ ուներ պարծենալու, որ երբեք վատ չի խոսել իր մտերիմների
մասին: *(վերաբերության խնդիր)*
5. Նա մտախտի դանդաղկոտությամբ դուրս եկավ խրամատից, որ ոչինչ չխանգարի
հանգիստ ու անվրդով ազդանշան տալուն: *(պատճառի պարագա)*
6. Վիրխարի կորուստների պատճառով գլուխը կորցրած՝ նա հստակ չգիտեր՝ ինքն
ինչ շահ ունի այդ հաղթանակից: *(ուղիղ խնդիր)*
7. Ոչ որ չեր ուզում մտնել նրա վիճակի մեջ, ով ժամանակին այդքան բարություն էր
արել ուրիշներին: *(ենթակա)*
8. Ամենամեծ փրկությունը ամպամած ու անլուսին գիշերն էր, որ արդեն արագ վրա
էր հասնում: *(ենթակա)*
9. Արդեն հրամայված էր, որ կեսօրից հետո վերսկսեն ուազմական
գործողությունները: *(ուղիղ խնդիր)*

18 **Նախադասություններից 3-ի դիմաց նրա տեսակի կամ ընդգծված մասի բնութագիրը սխալ է տրված: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Ես, անշարժ կանգնած, աչքերս հառել էի ճանապարհով ընթացող կառքին, **որ բռնեալ առ բռնեալ ինձնից հեռացնում էր եղբորս:** (թերի)
2. **Նա բացսիրտ ու պարզ մարդ էր** և ենթադրաբար ինձ պիտի ամեն ինչ պատմած լիներ, եթե այդշափ հուզված լիներ տեղի ունեցած դեպքերից: (գերադաս)
3. Տանը մնալ չկարողացա. հազիվ մի պատառ բան դնելով բերան՝ իջա ձորը, ապա մտս անտառ. ամեն ինչ՝ ամեն քար, ամեն քուփ, Վարդուհու թարմ հիշատակն ուներ: (բարդ համադասական)
4. Տիրություն ու լքո՞ւմ, ընդհակառակը՝ ոգևորություն, կենտրոնացում և աշխատանք: (անվանական անդեմ)
5. **Սիրե՛ ու աշխատե՛.** սա թող լինի մեր կյանքի իմաստը: (անենքակա)
6. Երբ կառքը հեռացավ իմ տեսադաշտից, և **ճանապարհի վոշին այլևս չէր երևում,** ես նստեցի կիսաշոր խոտերի վրա և սկսեցի լալ հեռացող կառքի հետևից: (սոռորադաս)
7. Այսօր որքան մոտենում էինք Դիլիջանին, **այնքան անհամբերությունն աճում էր հոգուս մեջ՝ նրան անմիջապես հանդիպելու հույս փայփայելով:** (գերադաս)
8. Զարմանալի մի զգացում արթնացավ մեջս այդ տեսարանից. **ավա՛դ, սիրտս Էլ կարծես խոցված լիներ:** (համառոտ)
9. Զարմանքով լսելով տարօրինակ երևույթի մասին՝ իսկույն հրամայեց իր տերության բոլոր գիտնականներին՝ հավաքվեն պալատում՝ բացատրելու այդ առեղծվածը: (բարդ սոռորադասական)


19 **Նախադասություններից 3-ում լեզվական սխալ չկա: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Տնօրենը վերջին հանդիպման ընթացքում աշխատակիցներին հավաստիացրեց, որ աշխատանքի արդյունքները կարող են գերազանցել սպասելիքներից: 2. Այսօր հանքարդյունաբերությունը զարգացող երկրներից շատերում է տնտեսության գերակա ճյուղ և արագ զարգանում է: 3. Տնօրենը նաև նշեց, որ նորամուծությունների արդյունքում շահել է ոչ միայն գործարանի նեկավարությունն ու գործառուների կազմակերպությունը, այլև սովորական աշխատողը: 4. Վերջում նա հավելեց, որ միշտ պատրաստ է պայքարելու՝ աշխատանքային պայմանները բարելավելու համար: 5. Ելույթ ունեցան նաև մի շարք հանքափորներ, որոնք ըստ արժանավույն գնահատեցին վերջին տարիներին իրենց դեկավարության ներդրած ջանքերը: 6. Նրանցից շատերը նշեցին, որ հանձինս նոր տնօրենի՝ ունեն իրենց շահերի հուսալի պաշտպան: 7. Բանվորներից մեկը հայտնեց, որ շատերն ունեն նոր գաղափարներ, որոնց կարելի է կյանքի կոչել: 8. Այնուհետև երկրաբանները, տնտեսագետներից մեկը և այլոք հանդես եկան մի շարք հետաքրքիր նախաձեռնություններով: 9. Վերջում բոլորը հոտնկայս լսեցին պետական օրիներգը:


20

Նախադասություններից 3-ի գծապատկերում սխալ կա: Նշել դրանց համարները: (3 միավոր)


- Այրի Սալոմեն զնում էր Փարիզ, որպեսզի խորհրդակցի քմիշկների հետ, բայց իր իսկ խոստովանությամբ վախենում էր խաղից դուրս մնալուց կամ անէության մեջ սուզվելուց, քանի որ վերջին ամիսներին ավելի շատ զրբերով էր զրադաշտ, քան պարահանդեսներին մասնակցելով, և դա կարող էր վնաս հասցնել իր հեղինակությանը:




- Հովվական շները, որոնք ոչխարի հետ սարից իջել են, անհանգիստ են, որովհետև չեն հասկանում, թե ինչու իրենց տերը, երբ օտար մարդիկ քշում են ոչխարը, իրենց օգնության չի կանչում, այլ բարկանում է իրենց վրա, իսկ այն ժամանակ, երբ փորձում են հարձակվել, նույնիսկ մահակ է բարձրացնում:




- Հարազատների կողմից լրված՝ նա իր մեծ հյուրասենյակում, որը միշտ մռայլ էր թվում, կարդում էր փիլիսոփայական գրքեր, նաև մշտապես փորձում էր խուսափել պարտատերերից, որոնք սկսել էին հետապնդել իրեն ամուսնու մահից հետո՝ չհայտնելով անգամ, թե ինչ պատճառով էր նա խրվել պարտքերի մեջ:




4. Զեյթունում Արամ Թովմասյանը բազմից ապացուցել էր իր արիությունը, սակայն այժմ, եթե հասավ ժայռապարսպի եզրին, կորցրեց վճռականությունը, քանի որ անթույլատրելի էր համարում կասկածի տակ առնել այն մարդուն, որը սիրված էր բոլորի կողմից և այդքան մեծ հարգանք էր վայելում:




5. Արաքսը՝ հայոց մայր գետը, որ խաղաղ օրերին այնպես հանդարտ հոսում էր, այժմ անմասն չէր ընդհանուր խառնաշփորքին ու անասելի ջանք էր զործադրում, որ դուրս ժայթքի խեղդող ափերից՝ տեսնելով՝ ինչ է կատարվում Իշխանաց կղզում, որ դողում էր՝ սարսափած մեջք մեջքի բարձրացող ալիքներից, և ահարեկվում այն մտքից, թե կուլ կզնա պղտոր ջրերին:




6. Շուկայում վերուվար անող խմբերն այնքան հորդառատ էին, որ մարդ կարող էր հավատալ, թե ինքը զտնվում է ոչ թե այս զավառական փոքրիկ քաղաքում, այլ Հալեպում. այստեղ եվրոպական զգեստներ հազար քուրք վաճառականներն ու պաշտոնյաները բացեիրաց գենք էին կրում, լեռնական ցեղերը արդիական հրացաններով էին շրջում, մինչդեռ քրիստոնյաների մոտ հայտնաբերված գրպանի դանակն անգամ կասկածի տակ էր առնվում:




7. Գարրիելը գնեց մի փոքրիկ բլիթ, որի վրա խաղողի օշարակ էր քսված, և հասկացավ, որ նույնիսկ այդ «ծիծեռնակի կերի» հետ մանկական հուշեր են կապված, բայց առաջին իսկ պատասխանը տիհաճություն զգաց և թխվածքը նվիրեց մի փոքրիկ տղայի, որ նայում էր իր բերանին՝ աչքերը բացուխուփ անելով:



8. Որքան նա մնաց ընդհանուր սպասարակում, որտեղ գոլորշու ամպեր էին դանդաղ վեր բարձրանում՝ Ստեփանը չկարողացավ ճիշտ գնահատել, բայց դա նման էր կարճատև մահվան, որի հետևանքները նա հետո էր զգալու և խորությամբ ըմբռնելու:



9. Եթե մարդիկ հրապարակից հեռացան ու բաժանվեցին մանր խմբերի, նա չգիտակցեց այդ գործողությունների իմաստը, սակայն շուտով հասկացավ, որ տեղի ունեցողը դուրս է եկել իր վերահսկողությունից, և որոշեց չխառնվել այդ գործին:



21

Նախադասություններից Յունական սխալ չկա: Նշել դրանց համարները:
(Յ միավոր)

1. Ամենալայն տեղում՝ Կադնուտի կիրճի ու ձորեզերքի արանքում, ավելի քան երեք կիլոմետր քաց տարածություն կար, բայց Գարրիելի միտքն ամենից շատ զբաղեցնում էին սարահարթի զարմանալիորեն սուր եզրերը, որ ինքը՝ բնությունն էր գծել:
2. Թե՛ երբ էր Ստեփանն արքնացել, ինչ չափով էր ծնողների խոսակցությունը լսել՝ ոչ ոքի հայտնի չէր:
3. Մի ժամ շարունակ Արամը, թեև ջանասիրաբար փորձեց փաստեր բերել՝ իրեն արդարացնելու համար, սակայն դա նրան չհաջողվեց:
4. Բարձրացնելով ոչ միայն աշխատանքային ավյունը, այլև պայքարի խանդավառ ոգին՝ Մեծ խորհուրդը, տեր Հայկազունի գլխավորությամբ, իր գործերն էր վարում հովտում:
5. Ավանում կառուցված առաջին բնակարանը նրա նախկին տերերի գյուղական տնակն էր, որ գտնվելով ցանկապատի ներսում՝ իր տնից վաթուն ուտնաչափ հեռավորության վրա էր:
6. Ողջ քաղաքը ցնցած, սակայն չբացահայտված այդ հանցագործությունից շատ տարիներ անց մայրաքաղաքում մի բարձրահասակ մարդ ներկայանում է ոստիկանություն՝ զղջալով իր սահմոկեցուցիչ արարքի համար և խնդրելով ձերբակալել իրեն՝ մարդասպանին:
7. Բալգակը «Ընտանեկան կյանքի դպրոցը» պիեսի վրա աշխատելիս իրենց գյուղաքաղաք էր հրավիրել մի երիտասարդ գրողի, որին, չգիտես ինչու, տաղանդավոր էր համարում:
8. Վեպերի սյուժեներն ապրում էին նրա մտքում, ինչպես կարմրախայտը ձկնարուծարանում, և նա անհրաժեշտության դեպքում որսում էր դրանք:
9. Նա համոզված էր, որ կարող է հաղթահարել նախապաշարմունքները և ոչինչ չէր խնայում այդ նպատակին հասնելու համար:

**Պարզ նախադասություններից 3-ը ճիշտ են փոխակերպված բարդ
ստորադասականի:** Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. *Մոր ու որդու՝ իրար երեսի նայելը և հարցի՝ այդպես վճռվելը բոլորի համար
անակնակալ էր:*
Բոլորի համար անակնակալ էր, որ մայր ու որդի նայեցին իրար երեսի և հարցն
այդպես վճռեցին:
2. *Վանի մասին երկար հարցուփորձ անելուց հետո հորեղբայրս հայտնեց դեսպի
Աղքամար կղզի ուխտագնացության ցանկության մասին:*
Վանի մասին երկար հարցուփորձ անելուց հետո հորեղբայրս հայտնեց, որ դեսպի
Աղքամար կղզի ուխտագնացության ցանկություն ունի:
3. *Անդրադառնալով մարդկանց սոցիալական տարբերությունների
վիճակագրությանը՝ Շանթը համայնավարական տեսակետը համարում էր
անիմաստ ու վերացական:*
Երբ Շանթը անդրադառնում էր մարդկանց սոցիալական տարբերությունների
վիճակագրությանը, համայնավարական տեսակետը համարում էր անիմաստ ու
վերացական:
4. *Ամեն տարի՝ գարունը բացվելիս, հովհաններն իրենց վրաններով և հոտերով
բարձրանում են լեռները:*
Երբ ամեն տարի գարունը բացվում է, հովհաններն իրենց վրաններով և հոտերով
բարձրանում են լեռները:
5. *Իմ աչքից չէր վրիպում աղջկա՝ մի ամբողջ շաբաթ մեր հարազատներին
արհամարհանքով նայելը:*
Իմ աչքից չէր վրիպում, որ աղջկը մի ամբողջ շաբաթ մեր հարազատներին
արհամարհանքով է նայում:
6. *Մինչև դանդաղ տեղից շարժվելը երիտասարդի աչքերը որոշ ժամանակ հառած
մնացին այդ պատկերներին:*
Երիտասարդի աչքերը որոշ ժամանակ հառած մնացին այդ պատկերներին, մինչև
որ դանդաղ տեղից կշարժվեր:
7. *Տիկինը շատ էր դժգոհում շրջապատի որոշ մարդկանց՝ իրեն բավարար հարգանքի
և ուշադրության շարժանացնելուց:*
Տիկինը շատ էր դժգոհում այն բանից, որ շրջապատի որոշ մարդիկ իրեն բավարար
հարգանքի և ուշադրության չեն արժանացնում:
8. *Մարկեսի համար մեծագույն անակնակալը իր վեսպի համար Նորելյան մրցանակի
արժանանալն էր:*
Այն, որ իր վեսպի համար արժանացավ Նորելյան մրցանակի, Մարկեսի համար
մեծագույն անակնակալ էր:
9. *Մեծարենցը, տեղյակ լինելով հանդերձ «Ծիածան» ժողովածուին ուղղված սուր
քննադատությանը, չէր հապաղում իրատարակության հանձնել իր հաջորդ՝ «Նոր
տաղեր» ժողովածուն:*
Մեծարենցը, որ տեղյակ էր «Ծիածան» ժողովածուին ուղղված սուր
քննադատությանը, չէր հապաղում իրատարակության հանձնել իր հաջորդ՝ «Նոր
տաղեր» ժողովածուն:

23 **Տրված պնդումներից 3-ում սխալ կա: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. **Ամրարիշտ, աճքասիր, դժնի բառերը փոխառյալ են և հայերենի տեսակետից չեն կարող բաժանվել բաղադրիչների:**
2. **Սեր-սեր, պետ-պետ, գետ-գետ** համանունային գույգերի անդամներից մեկի հնչյունափոխվելու և մյուսի չինչյունափոխվելու հանգամանքը կապ ունի գրաբարում դրանց տարբեր արտասանություններ և գրություններ ունենալու հետ:
3. Գրական արևելահայերենում բազմավանկ պարզ բառերի վերջին բաց վանկի **ու-ն** հոգնակի կազմության ժամանակ **չի** հնչյունափոխվում:
4. Բառի վերջին վանկում **ույ** երկինչյունը շեշտից գրկվելիս միշտ հնչյունափոխվում է:
5. Հայերենում **թ** ձայնավորը երբեք շեշտ չի կրում:
6. **Հինավորց** բառը գրվում է **ց**-ով, որովհետև կազմված է **օր** բառի գրաբարյան հոգնակի սեռականով:
7. Հայերենում կան (**այրար** ածանցով կազմված ոչ միայն մակրայներ, այլև վերաբերականներ և գոյականներ):
8. Նույնարմատ համանունների եզրերը կազմող բառերը շատ հաճախ պատկանում են տարբեր խոսքի մասերի:
9. Կրկնավոր բարդությունների բաղադրիչներից մեկը հաճախ բարդության կազմի մեջ է մտնում՝ կրելով շեշտի հետ չկապված հնչյունափոխություն:

24 **Տրված պնդումներից 3-ում սխալ կա: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. **Աներքին հոլովման ենթարկվող բոլոր բառերը վերջանում են **Ճ** հնչյունով:**
2. Բոլոր անկանոն բայերը անցյալ կատարյալում անկանություն են դրսնորում:
3. Հայերենում կան կրկնակի (և **ե**, և **ա**) լծորդություն ունեցող թե՛ նույնիմաստ, թե՛ տարիմաստ բայեր:
4. Առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունները ունեն բացառական հոլովի՝ գրական արևելահայերենում ընդունելի կրկնակի ձևեր:
5. **Չ**սոսկածանցավոր անկանոն բայեր չկամ:
6. Պակասավոր բայերի մեծ մասի պակասող ժամանակաձևերը լրացնող համապատասխան բայերը սոսկածանցավոր են:
7. **Ություն** ածանցով կազմված վերացական գոյականներից ոչ մեկը հոգնակի թվով **չի գործածվում**:
8. Դերանվանական հոլովման ենթարկվող բոլոր դերանուններն ունեն սեռականի և տրականի՝ միմյանցից տարբերվող ձևեր:
9. Կան բայական ածանցներ, որոնք ունեն իրենց ածականակերտ համանունները:

25 **Տրված պնդումներից Յում սխալ կա: Նշել դրանց համարները: (Յ միավոր)**

1. Եթե նախադասությունը ունի մեկից ավելի ենթականեր, ապա այն բարդ նախադասություն է:
2. Գրական արևելահայերենում հատկացուցիչը որևէ հոդ չի կարող ստանալ:
3. Բայի նման՝ պարագան լրացում կարող են ստանալ նաև ածականը և մակրայք:
4. Հիմունքի պարագան (բուն հիմունք) դրվում է բացառական, գործիական հոլովներով կամ ձևավորվում է կապային կառույցով:
5. Հարաբերյալ կարող է լինել միայն գերադաս նախադասության կազմում:
6. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասության մեջ և՛ ենթական, և՛ ստորոգյալ կարող են գեղշված լինել:
7. **Ես, դու, նա** անձնական դերանուններով և **ինքը** դերանվան համապատասխան ձևերով կազմված կապակցությունները բացահայտիչ-բացահայտյալ կառույցներ են:
8. Բոլոր խնդիրները կարող են արտահայտվել փոխանուն ածականով կամ փոխանուն թվականով:
9. Կրավորական սեռի բայը կարող է ունենալ անջատման խնդիր լրացում: